ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«26» օգոստոսի 2019 թվականի N:400-ա ք.Գյումրի

ԱՐՏԱՇԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԲԱՑԱԿԱՅԵԼ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2003 թվականի մարտի 11-ի թիվ 192 որոշմամբ հաստատված «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 21-րդ, 26-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արտաշես Ներսիսյանի 2019 թվականի օգոստոսի 26-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Արտաշես Ներսիսյանին թույլատրել բացակայելու 2019 թվականի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ:
2. Արտաշես Ներսիսյանի՝ բացակայության ընթացքում «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության վարչատնտեսական գծով փոխտնօրեն Արամ Հակոբյանին:

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Փոխարինող

Իսկականի հետ ճիշտ է